



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՁԻ**

Հ Ր Ա Մ Ա Ն

« 09 » մարտի 2015 թ.

N 25

ք. Ստեփանակերտ

«Լեռնային Ղարաքաղի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» թիվ 04 առ 06.02.2015թ. հրամանում փոփոխություն կատարելու մասին

Ղեկավարվելով «Դատախազության մասին» Լեռնային Ղարաքաղի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, 21-րդ հոդվածի 3-րդ մասով, համաձայն ԼՂՀ գլխավոր դատախազի թիվ 08 առ 28.01.2009թ. «Լեռնային Ղարաքաղի Հանրապետության Գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողով ստեղծելու մասին», թիվ 09 առ 02.03.2015 թ. « Լեռնային Ղարաքաղի Հանրապետության դատախազության կառուցվածքը հաստատելու մասին» հրամանների և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաքաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. «Լեռնային Ղարաքաղի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» թիվ 04 առ 06.02.2015թ. հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները

1) Առաջին մասի 2-րդ կետի 1-ին ենթակետում «ԼՂՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ»-ը փոխարինել « ԼՂՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության բաժնի պետ» պարբերությամբ:

2) Առաջին մասի 2-րդ կետի 3-րդ ենթակետում «ԼՂՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված և ընդհանուր բնույթի հանցագործությունների գործերով բաժնի պետ»-ը փոխարինել «ԼՂՀ գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման բաժնի պետ» պարբերությամբ:

3) Առաջին մասի 2-րդ կետի 4-րդ ենթակետում «ԼՂՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն, կազմակերպված, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով բաժնի պետ»-ը փոխարինել «ԼՂՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով բաժնի պետ» պարբերությամբ:

2. Հրամանն ուղարկել ԼՂՀ գլխավոր դատախազի տեղակալներին, ԼՂՀ գլխավոր դատախազության ավագ դատախազին ու դատախազին, բաժինների պետերին և ԼՂՀ քաղշրջդատախազներին:

3. Հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Արդարադատության երրորդ դասի
պետական խորհրդական**

Ա.Ա.Մոսիյան